Դատական ծախսերից պետական տուրքի բաշխման հարցի լուծում.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Տվյալ դեպքում Դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցը բավարարվում է, իսկ պետական տուրքը նախապես վճարվել է հայցվորի կողմից՝ գտնում է, որ պատասխանողից հօգուտ հայցվորի ենթակա է բռնագանձման 50.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 234.12-րդ հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

<<ԱԷՄՋԻ>> ՍՊ ընկերության հայցն ընդդեմ <<Ճամբարակի առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի՝ 28.02.2023թ. <<ԱԷՄՋԻ>> ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել (վերացնել) <<Ճամբարակի առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի 28.02.2023թ.-ին <<ԱԷՄՋԻ>> ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին կայացված որոշումը:

<<Ճամբարակի առողջության կենտրոն>> ՓԲԸ-ից հօգուտ <<ԱԷՄՋԻ>> ՍՊ ընկերության բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և այն կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ